ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-4-3-Ա

ք. Երևան 07.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 7-ի նիստում քննարկեց 2021 թվականի փետրվարի 2-ին Լևոն Նուրազյանի կողմից ներկայացված՝ «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ (Արագածոտնի մարզ, 0220, Ոսկեվազ համայնք, 18-րդ փ., 19շ, գինու գործարան, AM) ընկերության բողոքը «WINE TIME» (No20200309) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «WINE TIME» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://www.facebook.com/WineTimeArmenia/ ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ: Ինչ վերաբերվում է Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, ապա տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից օգտագործվում և գովազդվում է «Voskevaz Wine Time» նշանը, որտեղ հիմնական տրամաբանական շեշտադրումը ընկնում է «Voskevaz» բառի վրա:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն

ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված «WINE TIME» ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «WINE TIME» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://www.facebook.com/WineTimeArmenia/ ինտերնետային կայքում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Լևոն Նուրազյանի կողմից ներկայացված՝ «WINE TIME» (No20200309) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ